

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

---



ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԹԻՄԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ  
ՀԱՊՀ ՎԱՆԱԶՈՐԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂՈՒՄ  
(2014-2021թթ.)

Վանաձոր 2021

## Լճոռու մարզի տնտեսվարողների և ՀԱՊՀ Վանաձորի մասնաճյուղի համագործակցությունը

Հայաստանի Հանրապետությունում կրթական համակարգը պահանջում է մի շարք խնդիրների լուծում, որոնցից ամենակարևորը կրթության որակի բարելավումն է: Այս որոշումը մեծապես կախված է կրթական, հետազոտական և դաստիարակչական գործընթացներից:

Ինտեգրացիոն մոտեցումը պետք է ապահովի ուսանողների ժամանակակից գիտելիքների տիրապետում, մասնագիտական հմտություններ և կարողություններ գործնական խնդիրների լուծման համար:

Ժամանակակից հասարակությունը հատուկ պահանջներ է ներկայացնում համալսարանի շրջանավարտին, որի մեջ կարևոր տեղ են զբաղեցնում՝

- ❖ սահմանված ժամկետների մեջ տեղավորվելու պատասխանատվությունը և հմտությունը,

- ❖ սեփական և դիմացինի ժամանակը տնօրինելու ունակությունը,

- ❖ լայն մտահորիզոնը, իրադարձությունների և գործընթացների կառուցողական տեսակետը,

- ❖ ժամանակին և հստակ մտքերը ձևակերպելու, տարբերակներ կանխատեսելու կարողությունը,

- ❖ թիմ կազմելու և անհրաժեշտ ռեսուրսների ներգրավման և թիմում աշխատելու ունակությունները:

Ինչպես նաև ուսումնական հաստատությունների շրջանավարտներից պահանջվում է նոր մասնագիտական մտածողություն, բարձր շարժունակություն, թիմային գործունեություն:

Թիմը հաջողակ աշխատանքի հիմքն է գործունեության յուրաքանչյուր ոլորտում: Թիմի յուրաքանչյուր անդամ ունի իր անհատական ներդրումը ընդհանուր աշխատանքում և պատասխանատվություն է կրում վերջնական արդյունքի համար: Հաջողված է այն թիմը, որի յուրաքանչյուր անդամը գիտի իր անելիքն ու գիտակցում է, որ իր կատարած թեկուզ ամենափոքր քայլից է կախված թիմի հաջողությունը:

***Թիմի հայեցակարգը ենթադրում է, որ բոլոր անդամները հավատարիմ են միասնական առաքելությանը, կրում են հավաքական պատասխանատվություն:***

***Թիմային աշխատանքը հնարավոր է իրականացնել, երբ կրթական գործընթացում ներառվում են ակտիվ և ինտերակտիվ ուսուցման մեթոդներ, որոնց մեջ առանձնանում են ուսուցման թիմային և խմբային մեթոդները:***

Վերջին տարիներին ՀԱՊՀ Վանաձորի մասնաճյուղում փորձեր են արվում տարբեր կուրսերի ուսանողների ներգրավմամբ թիմային աշխատանքներ կատարելու, ներառյալ՝ ձեռնարկությունների կողմից մասնաճյուղին առաջարկված թեմաների հետ կապված: Աշխատանքներում ներգրավված ուսանողները հնարավորություն ունեն ներկայացնել իրենց կատարած աշխատանքների որոշակի հատված՝ որպես

կուրսային, հետագայում նաև որպես ավարտական աշխատանք կամ մագիստրոսական թեզ: Ի դեպ, կատարված աշխատանքի արդյունքների մասին պարբերաբար զեկուցվել են ուսանողական գիտաժողովներում, հետագայում այդ արդյունքների մի մասը ներկայացվել են որպես գիտական հոդվածներ, հրատարակվել տարբեր գիտական ժողովածուներում:

Մի քանի օրինակներով ցույց տանք, թե ինչպես է կազմակերպվում ՀԱՊՀ Վանաձորի մասնաճյուղի և տնտեսվարողների համագործակցությունը, որի հիմքում ընկած են մասնաճյուղի ուսանողների թիմային աշխատանքի հաջողությունները:

#### **2014 թ.**


Վանաձորի «Ավտոգեն-Մ» ՍՊԸ (նկ. 1) կողմից մասնաճյուղին առաջարկվում է ուսումնասիրել գործարանի կողմից թողարկվող արտադրանքի որակի խնդիրները: Թեման ամբիոնի կողմից հանձնարարվում է ամբիոնի դոցենտ Մ.Նաջարյանին և «Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում մեքենաշինության ճյուղում» մասնագիտությամբ սովորող երրորդ կուրսի ուսանողուհի **Աննա Եղոյանին**:



**Նկ. 1. «Ավտոգեն -Մ» գործարան: Հավաքման արտադրամաս**

Թեմայի կատարման ընթացքում ուսանողուհին բազմիցս այցելել է «Ավտոգեն-Մ» գործարան, տեղում ծանոթացել խնդրին, հանդիպել գործարանի առաջավոր մասնագետների հետ, հավաքել է անհրաժեշտ տվյալներ, որոնք հնարավորություն են տվել նրան լուծելու առաջադրված խնդիրները: Կատարվել է Վանաձորի «Ավտոգեն-Մ» գործարանում «Մայակ-2-01» գազակտրիչի արտադրման տեխնոլոգիական գործընթացի վերլուծությունը: Որակի վերահսկման վիճակագրական մոդելի կիրառմամբ պարզվել է, որ տեխնոլոգիական այդ գործընթացը չի ապահովում անհրաժեշտ ճշտությունը: Բացահայտվել են որակի վրա ազդող գործոնները և տրվել այդ ամենի քանակական ու որակական գնահատականը:

Ուսումնասիրման արդյունքում գործարանին առաջարկվել է անճշտությունների շտկման ու կանխարգելման միջոցառումներ՝ ապահովելու համար արտադրանքի պահանջվող որակը:



Ուսումնասիրման արդյունքները ուսանողուհին զեկուցել է մասնաճյուղի 2013-2014թթ. ուսանողական գիտական տարեկան գիտաժողովների լիագումար նիստերում (նկ 2): Հետագոտման նյութը **Աննա Եղոյանը** 4-րդ կուրսում բակալավրի կրթական ծրագրով ներկայացրել է որպես դիպլոմային աշխատանք, շարունակել



**Նկ. 2. Աննա Եղոյանի զեկույցը ՈՒԳ համաժողովի լիագումար նիստում, 2013թ.**

### **2015 թ.**

Հայաստանի Ազգային Ագրարային Համալսարանի կողմից նախագծվել է այգեփոր մեքենա, որը նախատեսված է պտղատու և խաղողի այգիների միջբնային և միջվազային տարածությունների մշակման համար (նկ. 3): Մեքենայի նմուշը պատրաստվել է Վանաձորի Զինվան ՍՊԸ-ում: Ձեռնարկությունը ծագած խնդիրների լուծումները գտնելու ակնկալիքով դիմել է նաև ՀԱՊՀ Վանաձորի մասնաճյուղին: Այդ նպատակով մասնաճյուղում ստեղծվել է աշխատանքային խումբ:





**Նկ. 3. Պտղատու և խաղողի այգիների միջբնային և միջվազային տարածությունների մշակման համար այգեփոր մեքենա**



**Նկ. 4. Գործնական հանդիպումներ ՉինՎան ՄՊԸ-ում**

Խմբում ընդգրկվել են մասնաճյուղի երրորդ կուրսի ուսանողուհիներ **Գոհար Դարբինյանը**, **Աստղիկ Սարոյանը** և մեկ տարի անց նրանց է միացել արդեն երրորդ կուրսեցի **Էդիտա Հովհաննիսյանը**: Աշխատանքային խմբում ընդգրկվել են նաև Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի (Նելսոն Մամուլյան), ՉինՎան ՄՊԸ-ի (Տոմա Կարապետյան), ՀԱԱՀ (Ժուլվեռն Մկրտչյան) աշխատակիցներ ( նկ. 4, 5):



**Նկ. 5. Աշխատանքային հանդիպում ՎՏԿ-ում**

Խմբի առջև խնդիր է դրվել՝ կատարել շուկայի ուսումնասիրություն, կազմել բիզնես պլան, մշակել ներդրումային ռազավարության պլան:

Նախատեսվել է կազմել բիզնես փաթեթ և այն տրամադրել ձեռնարկությանը՝ ոլորտում

որոշակի գործառույթների իրականացման համար: Թիմն ուսումնասիրել է ձեռնարկության ներդրումային ռազմավարության զարգացման և հնարավոր ներդրումների որոնման խնդիրները, որում իր գործնական օգնությունն է ցուցաբերել Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնը (Ն.Մամուլյան): Ընդհանուր առմամբ աշխատանքային խումբը փորձել է օգնել ձեռնարկությանը, գտնել այն անհատներին կամ կազմակերպություններին, ովքեր շահագրգռված են ներդրումներ կատարել գյուղատնտեսության ոլորտում, այլ խոսքով անտարբեր չեն մեր երկրի ապագայի նկատմամբ ու ցանկանում են աջակցել տեղական արտադրությանը՝ այդ կերպ խթանելով գյուղատնտեսության զարգացումը:

Վանաձորի մասնաճյուղում ստեղծված աշխատանքային խումբը փորձել է գտնել տարբեր ուղիներ, այդ թվում նաև միջազգային ծրագրեր, օգնել գործարանին կազմակերպել մեքենայի սերիական արտադրությունը և աջակցել մարքեթինգային հետազոտությունների և տեղեկատվության տարածման գործում:



**Նկ. 6. Ուսանողների մոտ առաջացած խնդիրների պարզաբանումը ՉինՎան ՄՊԸ-ում ՀՊԱՀ-ի առաջնակարգ մասնագետ, սարքը նախագծող Ժուլվենոն Մկրտչյանի հետ**

Խմբի կատարած աշխատանքը համագործակցության յուրահատուկ օրինակ է՝ միտված բացահայտելու ու հնարավոր լավագույն տարբերակով լուծելու ձեռնարկության խնդիրները: Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Վանաձորի մասնաճյուղի, Վանաձորի ՉինՎան ՄՊԸ-ի և Վանաձորի տեխնոլոգիա-

կան կենտրոնի միջև 2015 թ.-ից կա եռակողմ համագործակցություն: Թիմի ուսանողները, ղեկավարը բազմիցս եղել են ՉինՎան ՍՊԸ-ում, տեսել արտադրանքը, քննարկումներ են կազմակերպել ձեռնարկության աշխատակիցների ու ագրարային համալսարանի ներկայացուցչի հետ (նկ. 6):

Սա համագործակցության լավ սկիզբ է, այն կկրի շարունակական բնույթ, որպեսզի Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Վանաձորի մասնաճյուղի ճարտարագիտական միտքը ներդրվի արտադրության զարգացման համար:

Թիմի կատարած աշխատանքների արդյունքները ուսանողները զեկուցել են Վանաձորի մասնաճյուղի 2016 թվականի ուսանողական գիտական տարեկան գիտաժողովի լիագումար նիստում, որպես թիմային աշխատանքի հաշվետվություն (նկ. 7):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՎԱՆԱՁՈՐԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

Նվիրվում է ՀԱՊՀ  
Վանաձորի մասնաճյուղի  
ավագ դպրոցի  
հիմնադրման 20-ամյակին  
1996-2016

ԱՌԱՋԻՆ ԼԻԱԳՈՒՄԱՐՆԻՍՏ  
Նախագահ՝ տ.գ.թ., դոցենտ Ա.Գ. Խառատյան  
ապրիլի 21-ին, ժամը 12:30, Լսարան 3203

Ողջույնի խոսք  
Մասնաճյուղի տնօրեն,  
տ.գ.թ., դոց. Ա.Գ. Խառատյան

1. Մարգարիտա Մարտիրոսյան (ավագ դպրոցի 12-րդ դաս. աշակերտ)  
Ձեռքբերումների երկու տասնամյակ  
դեկ. Ա. Փարսադանյան

2. Գոհար Դարբինյան, Աստղիկ Մարտիրոսյան (աղ. Խումբ ՎՀՏ 201Բ),  
Էդիտա Հովհաննիսյան (աղ. Խումբ ՎՀՏ 301Բ)  
Վանաձորի ՉԻՎԱՆ ՍՊԸ-ի այգեփոր մեքենայի ներդրման  
խնդիրները շուկայում  
դեկ. տ.գ.թ., դոց. Մ. Լաջարյան  
և Մամուկյան, ՏԿ համակարգող

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՏԱՐԵԿԱՆ  
ԳԻՏԱԺՈՂՈՎ  
21-22 ապրիլ  
ԾՐԱԳԻՐ

Վանաձոր 2016







**Նկ. 7. Թիմի ղեկույցը ՈԻԳ գիտաժողովում 2016թ.  
(ուսանողներ Գ.Դարբինյան, Ա.Սարգսյան, Է.Հովհաննիսյան)**




Կատարած ուսումնասիրությունների որոշակի մաս ներկայացված է ավարտական խմբի երկու ուսանողուհիների **Գոհար Դարբինյանի** և **Աստղիկ Սարգսյանի** ավարտական աշխատանքներում, հետագայում թեման շարունակվել և ձևակերպվել է նաև նրանց մագիստրոսական թեզերում (նկ. 8):

**Նկ. 8. Քննարկումներ դիպլոմային աշխատանքների պաշտպանությունից առաջ  
(Գոհար Դարբինյան և Աստղիկ Սարգսյան)**

**2016 թ.**

Համագործակցությունը Չինվան ՍՊԸ-ի հետ շարունակվում է: Առաջանում են նոր գաղափարներ:



**Նկ. 9. Լոռու մարզի թիրախային շրջանները**

Գյուղատնտեսության մեքենայացումը գյուղատնտեսական արտադրության ճյուղերում ձեռքի և կենդանի քարշող ուժի փոխարինումն է մեքենայացված աշխատանքով, ինչը բարձրացնում է աշխատանքի արտադրողականությունը, իջեցնում արտադրանքի ինքնարժեքը: Այս զարգացումներին ընդառաջ Վանաձորի «ՉԻՆՎԱՆ» ՍՊԸ-ն առաջ է քաշել գաղափար, որի նպատակն է Լոռու մարզում թիրախային 3



շրջաններում (նկ. 9) հիմնել գյուղտեխնիկայի վարձակալության և սպասարկման կայաններ, որոնք հնարավորություն կտան ֆերմերներին գյուղատնտեսական աշխատանքներն իրականացնել օգտագործելով համապատասխան գյուղտեխնիկա:

Գաղափարի իրագործման ընթացքում «ԶԻՆՎԱՆ»-ը, հիմք ունենալով ՀԱՊՀ Վանաձորի մասնաճյուղի հետ անցած տարիների համագործակցության փորձը, առաջարկեց մասնաճյուղին մասնակցելու նախագծի իրականացման աշխատանքներին: Ձևավորվեց աշխատանքային խումբ՝ մասնաճյուղի «Տնտեսագիտություն» մասնագիտությամբ երրորդ և չորրորդ կուրսերի ուսանողներից (**Էդիտա Հովհաննիսյան, Անժելա Հովհաննիսյան, Աստղիկ Միքայելյան**) և ընկերության մասնագետներից:

Թիմի կողմից ֆերմերների շրջանում իրականացված հարցումները ցույց են տվել, որ միջին հաշվով, մեքենատրակտորային կայանների տեխնիկայի 15-25%-ով ցածր սակագնի կիրառման պարագայում գյուղացիների և ֆերմերային տնտեսությունների 65%-ը հետաքրքրված են գյուղտեխնիկայի շահագործման հեռանկարով: Գրեթե բոլոր տեսակների՝ հատկապես մինիտրակտորների, առանձին կցորդիչների նկատմամբ առկա է պոտենցիալ պահանջարկի բարձր մակարդակ:

Ստացված տվյալների հիման վրա խմբի կողմից ընտրված տարածաշրջանների համար, կախված ցանքատարածություններից և մշակաբույսերի առանձնահատկություններից, կատարվել է համապատասխան սարքավորումների ընտրություն, որոնք կնպաստեն գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացմանը և գյուղատնտեսական աշխատանքները կդարձնեն ավելի արդյունավետ:

Հավաքագրված լայնածավալ տվյալների հիման վրա աշխատանքային թիմի կողմից կազմվել է բիզնես-պլան, որտեղ հստակ ներկայացված է անհրաժեշտ գյուղտեխնիկայի չափը՝ ըստ համապատասխան կայանների:

Մեքենատրակտորային կայանների ստեղծումը կազմակերպելու է «ԶԻՆՎԱՆ» ՍՊԸ-ն, որի արտադրական հնարավորությունները թույլ են տալիս իրականացնելու տրակտորների հավաքում, կցորդիչ սարքավորումների արտադրություն, գյուղտեխնիկայի վերանորոգում:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՐԱԴԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԳՐԱՆԵՐԻ ԿՎԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ  
ՎԵՐԱԶԵՐՈՒ ՄԱՍԻՆՈՒՄԸ



ԶԻՆՎԱՆԻ  
ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ 25-ԱՄՅԱՆԻՆ  
1992-2017

ՈՒՍԱՌՈՂԱԿԱՆ ՏԱՐԵԿԱՆ  
ԳԻՏԱԴՐՈՂ  
03-05 մայիս  
ԾՐԱԳԻՐ



ԱՄԵՐԻԿԱՆ ԼԻՎԳՈՒՄԱՐԻՆԳՍ  
Նախագիտական և օգնականության  
մայիսի 03-ին՝ ժամը 14:00 ժամանակ  
Ողջուրդի խոսք  
Մասնաճյուղի տնօրեն,  
տ.գ.թ. Գրգենու Ա.Գ. Խաչատրյան

1. Վանիվա՝ Լադոյան (սակ խումբ՝ ՎԼԲԸ 6117)  
Լադոյանի խոսքը պատկերավոր կոր սերունդ, կոր  
հերոսներ  
դեկ.՝ Գրա.՝ Վ. Մանանյան
2. Լիլիտա՝ Հովհաննիսյան (սակ խումբ՝ ՎԼԸՏ 3017) և Աննա  
Հովհաննիսյան (սակ խումբ՝ ՎԼԸՏ 4017)  
Լուսին մարզի գյուղատեխնիկայի փորձակալության և  
սպասարկման կայանների ստեղծման ծրագիր  
դեկ.՝ տ.գ.թ. Գրգենու Ա.Գ. Լադոյան  
«ԶԻՆՎԱՆ» ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն  
Ա. Լադոյան
3. Մարգարիտա՝ Մարտիրոսյան (սակ խումբ՝ ՎԼԸՏ 6077)  
Լոր մոտեցումներ արդյունաբերության մակարդակի  
դիմադրական պատմությունների որոշման ուղղությամբ  
դեկ.՝ տ.գ.թ. Գրգենու Վ. Բալասյան

ԵՐԿՐՈՂՆԻ ԼԻՎԳՈՒՄԱՐԻՆԳՍ  
Նախագիտական և օգնականության  
մայիսի 10-ին, ժամը 14:15, լսարան 3203  
Գիտահայրիկ արդյունաբերության ակադեմիա  
Բաժանմունքների նախագահներ  
Գիտահայրիկի փակում  
Վիտալյան Գեորգի փոխտնօրեն, տ.գ.թ. Գրգենու Վ.Լ. Բալասյան

Վանաձոր 2017

Ինչպես վերը նշվեց, նախագծի գործարար ծրագրի կազմման աշխատանքներում ակտիվ մասնակցել են մասնաճյուղի III և IV կուրսի ուսանողները՝ Սարգյան Աստղիկը, Դարբինյան Գոհարը և Հովհաննիսյան Էդիտան:



Նկ. 10. Թիմի զեկույցը ՈԻԳ գիտաժողովում 2017թ. (Է. Հովհաննիսյան, Ա. Հովհաննիսյանը, Ա. Միքայելյանը)

Թիմի կատարած աշխատանքների արդյունքների մասին ուսանողները զեկուցել են Վանաձորի մասնաճյուղի 2017 թ. ուսանողական գիտական տարեկան գիտաժողովի լիագումար նիստում, որպես թիմային աշխատանքի հաշվետվություն (նկ. 10):



Նկ. 11. Հրատարակված գիտական հոդվածի հավաստագիր

2017 թ. դեկտեմբերին բակալավրիատի ուսանողներ **Անժելա Հովհաննիսյանը, Աստղիկ Միքայելյանը** և մագիստրատուրայի առաջին կուրսի ուսանողուհի **Էդիտա Հովհաննիսյանը** հրատարակել են գիտական հոդված և ստացել հավաստագիր (նկ. 11):

#### **2017-2021թթ.**

Ընդլայնվում են համագործակցության շրջանակները Լոռու մարզի Առևտրաար-



դյունաբերական պալատի, ՉինՎան ՄՊԸ-ի, Վանաձորի համայնքապետարանի զարգացման ծրագրերի, արտաքին կապերի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի (Ն. Մամուլյան) և ՎՏԿ-ի հետ: Որպես գյուղատնտեսության ոլորտը բարելավող միջոց առաջարկվում է ստեղծել ագրոտեխնոպարկ, որը տարածաշրջանում կլինի առաջինը (նկ. 12):

#### ***Նկ. 12. Աշխատանքային հանդիպում Վանաձորի համայնքապետարանի զարգացման ծրագրերի, արտաքին կապերի և տեղեկատվական տեխնոլոգիաների***

Ագրոտեխնոպարկը նպատակահարմար է ստեղծել Լոռու մարզում, որտեղ առկա են բոլոր անհրաժեշտ պայմանները, այդ թվում նաև պոտենցիալ գիտական ներուժի առկայությունը: ՀՀ Լոռու մարզի տարածքային զարգացման տեսլականն է՝ *2025թ. Լոռու մարզը կունենա բազմաձյուղ, զարգացած արդյունաբերություն, արդիականացված գյուղատնտեսություն, ՏՏ ոլորտ և զարգացած զբոսաշրջություն:*

Ագրոտեխնոպարկում ծավալված գործունեության շնորհիվ այս տեսլականը կդառնա առավել քան իրատեսական:

Նախագծի իրականացման թիմի անդամներից են մասնաձյուղի «Տնտեսագիտություն» մասնագիտությամբ սովորող ուսանողներ **Էդիտա Հովհաննիսյանը, Անժելա Հովհաննիսյանը, Աստղիկ Առաքելյանը:**

Թիմի կատարած աշխատանքի արդյունքների հիման վրա կազմվել է ագրոտեխնոպարկի կառուցվածքը առանձին մոդուլներով:

Հուսանք, որ նախագծի ֆինանսավորման դեպքում Վանաձորում հիմնված ագրարային տեխնոպարկը էական փոփոխություն կբերի ողջ տարածաշրջանին, որի մեջ մեծ ներդրում կունենան մասնաձյուղի ուսանողները:

Շարադրանքից ակնհայտ է, որ թիմային աշխատանքում մասնակցում են մասնաձյուղի «Տնտեսագիտություն» մասնագիտությամբ սովորող տարբեր կուրսի ուսանողները, որոնք ներգրավված են տնտեսական խնդիրների լուծման աշխատանքներին: Տեղին է ընդգծել, որ այդ մասնագիտության ուսանողները անդրադառնում են

նաև արտադրության տեխնոլոգիական խնդիրներին: Մասնավորապես ուսումնասիրում են տվյալ արտադրությունում արտադրվող սարքերի դետալների պատրաստման տեխնոլոգիական գործընթացները, ինչը ներառվում է նրանց ավարտական աշխատանքներում՝ որպես պարտադիր պայման (ավարտական աշխատանքի տեխնոլոգիական մասը պետք է կապված լինի տնտեսագիտական մասի հետ):



**Նկ. 13. 2018թ. ՀԱՊՀ գիտական համաժողովին ներկայացված զեկույցը (ուսանողուհիներ Ա. Հովհաննիսյան և Ա. Առաքելյան)**

Վերը նշված բոլոր ուսանողները թիմում իրենց գործունեության ընթացքում, որպես պարտադիր նախապայման, տիրապետում են համակարգչային նախագծման գիտելիքներին (AutoCad), ինչը հաջողությամբ նրանք կիրառում են տեխնոլոգիական նախագծման աշխատանքներում:

Ուսանողների կատարած հետազոտության արդյունքները զեկույցվել է ՀԱՊՀ 2018թ. պրոֆեսորադասախոսական գիտական համաժողովին (նկ. 13): Այն հրատարակվել է «Լրաբեր» գիտական հոդվածների 2019թ. ժողովածուում:

Անհրաժեշտ է ընդգծել նաև արդեն թիմային աշխատանքի փորձ ունեցող բարձր կուրսի ուսանողների աջակցությունը ցածր կուրսեցիներին:

Թիմի ձեռքբերումներից են նաև տարբեր միջոցառումներին, համաժողով-ցուցահանդեսներին մասնակցությունը, օրինակ՝ 2018թ. հունիսի 8-ին ՎՏԿ-ում կայացած Եվրոպական երկրներ արտահանման գործիքների, ինչպես նաև օժանդակող ծրագրերի և գործիքների վերաբերյալ տեղեկատվական սեմինարին, հուլիսի 7-ին կայացած ճարտարագիտական համաժողով-ցուցահանդեսին (նկ. 14), որտեղ ՀԱՊՀ ռեկտոր, պրոֆեսոր Ոստանիկ Մարուխյանին ուսանողուհի Աստղիկ Առաքելյանը առիթ ունեցավ ներկայացնելու տեղեկատվություն թիմային ընթացիկ աշխատանքների մասին:





*Նկ. 14. Թիմի անդամ Անժելա Հովհաննիսյանը, Էդիտա Հովհաննիսյանը, Աստղիկ Առաքելյանը մասնակցում են ՎՏԿ-ում կազմակերպված Եվրոպական Երկրներ արտահանման գործիքների, ինչպես նաև օժանդակող ծրագրերի և գործիքների վերաբերյալ տեղեկատվական սեմինարին*



*Նկ. 15. Թիմի անդամները՝ Ա. Հովհաննիսյանը և Ա. Առաքելյանը մասնակցում են ՈւԳ ընկերության 25-ամյակին նվիրված Ծաղկաձորում կայացած գիտաժողովին*

2019թ. մայիս ամսին ՀԱՊՀ Ուսանողական գիտական ընկերության 25-ամյակին նվիրված Ծաղկաձորում անցկացված գիտաժողովին թիմի անդամներից Անժելա Հովհաննիսյանը և Աստղիկ Առաքելյանը ներկայացրել են իրեց հետազոտության

արդյունքները և ստացել հավաստագիր (նկ. 15):



*Նկ. 16. Թիմի անդամներ Լուսինե Երկնափեշյանը և Աննա Նազարյանը պաշտպանել է ավարտական աշխատանքները և ստացել գերազանցիկության դիպլոմ (2020թ.)*



*Նկ. 17. Թիմի անդամ Աստղիկ Առաքելյանը պաշտպանել է մագիստրական թեզը և ստացել գերազանցիկության դիպլոմ (2021թ.)*

Թիմի անդամներից **Անժելա Հովհաննիսյանը** 2020թ. պաշտպանում է մագիստրական թեզը (թեման «Լոռու մարզի գյուղատնտեսական ոլորտի զարգացումը հիմնադրվող Ագրոտեխնոպարկի մեքենաշինական գործարանի ներդրմամբ») և ստանում գերազանցիկության դիպլոմ, **Լուսինե Երկնափեշյանը** (թեման «Պահեստավորման մեքենայացումը, որպես Լոռու մարզի գյուղարդյուրերական մթերքների արդյունավետ պահպանման միջոց») և **Աննա Նազարյանը** (թեման «Վերամշակման գործընթացի մեքենայացումը որպես Լոռու մարզի գյուղատնտեսական մթերքների արդյունավետ օգտագործման միջոց») պաշտպանում են ավարտական աշխատանքները և ստանում գերազանցիկության դիպլոմ (նկ. 16): Ներկայումս նրանք իրենց կրթությունը շարունակում են մագիստրատուրայում: 2021թ. **Աստղիկ Առաքելյանը** պաշտպանում է մագիստրոսական թեզ «Լոռու մարզում գյուղմեքենաշինական արտադրության կազմակերպումը՝ որպես գյուղատնտեսության զարգացման խթան» թեմայով և ստանում գերազանցիկության դիպլոմ (նկ. 17):


Կատարած հետազոտությունների արդյունքում, հաշվի առնելով ներկայիս շուկայի պահանջները Աստղիկ Առաքելյանը մագիստրոսական թեզում ներկայացնում է իր կողմից մշակված էլեկտրոնային գյուղատնտեսության մաս կազմող ռազմավարություն՝ բջջային հավելվածը, որը ոլորտում հանդես կգա որպես նոր տեխնոլոգիա: Այնուհետև հետազոտման արդյունքները ներայացնում է Մոսկվայի պոլիտեխնիկական համալսարանի 2021թ. ապրիլին կայացած գիտաժողովին և տպագրվում որպես գիտական հոդված համաժողովի գիտական հանդեսում:

Բոլոր չորս ուսանողների ավարտական թեմաները Լոռու մարզում նախատեսվող Ագրոտեխնոպարկի առանձին մոդուլների հետազոտման աշխատանքների արդյունքներն են:

*Որպես օրինակներ ներկայացնենք մագիստրատուրան ավարտած 2020 թվականին ուսանողուհի Անժելա Հովհաննիսյանի և 2021թվականին ավարտած ուսանողուհի Աստղիկ Առաքելյանի ուսումնառության տարիների ընթացքում ձեռք բերած ուսումնագիտական հաջողությունները, ինչը թիմում նրանց կատարած անհատական աշխատանքի արդյունքն է:*

## ԱՆԺԵԼԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎՆԵՐԻՆ

---



**Թիմի անդամ Ա. Հովհաննիսյանի զեկույցը ՀԱՊՀ ՎՄ ՈՒԳ գիտաժողովի լիազումար նիստում (2017թ.)**



**Թիմի անդամ Անժելա Հովհաննիսյանը մասնակցում է ՀԱՊՀ ՈՒԳ ընկերության 25-ամյակին նվիրված Ծաղկաձորում կայացած գիտաժողովին (մայիս 2019թ.)**





*Թիմի անդամ Անժելա Հովհաննիսյանը  
մասնակցում է ՎՏԿ-ում կազմակերպված  
Եվրոպական Երկրներ արտահանման  
գործիքների, ինչպես նաև օժանդակող  
ծրագրերի և գործիքների վերաբերյալ  
տեղեկատվական սեմինարին*

*2018թ. ՀԱՂՀ գիտական համաժողովին  
ներկայացված զեկույցը  
(ուսանողուհիներ Ա. Հովհաննիսյան և  
Ա. Առաքելյան 2018թ.)*

## ՈՒՍՈՒՄՆԱԴՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԱՆԺԵԼԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԱԾ ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԸ


1. **А. А. Оганисян и др.** «Программа создания аренды сельхозтехники и станции обслуживания в регионе Лори РА». Журнал об экономических науках «Бенефициар»  
[www.beneficiar-idp.ru](http://www.beneficiar-idp.ru) г. Кемерово 2017г.





2. Ա. Ա. Հովհաննիսյան և ուրիշներ «Լոռու մարզում Ագրոտեխնոպարկի ստեղծման անհրաժեշտությունը և տնտեսական հիմնավորումը» ՀԱՊՀ(Պոլիտեխնիկ) Լրաբեր, Գիտական հոդվածների ժողովածու, Երևան 2019թ.

3. А. А. Оганисян и др. «Некоторые вопросы повышения производительности сельскохозяйственного производства». Журнал об экономических науках «Бенефициар» [www.beneficiar-idp.ru](http://www.beneficiar-idp.ru) г. Кемерово 2020г.



## ԱՍՏՂԻԿ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎՆԵՐԻՆ



*Թիմի անդամները՝ Ա. Առաքելյանը և Ա. Հովհաննիսյանը մասնակցում են ՈւԳ ընկերության 25-ամյակին նվիրված Ծաղկաձորում կայացած զիտաժողովին*



*Թիմի անդամ Աստղիկ Առաքելյանը մասնակցում է ՎՏԿ-ում կազմակերպված Եվրոպական Երկրներ արտահանման գործիքների, ինչպես նաև օժանդակող ծրագրերի և գործիքների վերաբերյալ տեղեկատվական սեմինարին*



**2018թ. ՀԱՊՀ գիտական համաժողովին ներկայացված զեկույցը  
(ուսանողուհիներ Ա. Առաքելյանը և Ա. Հովհաննիսյան 2018թ.)**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԴՈՒԼՏԵՆՈՒԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
Պ.ՄԵԼՔՈՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՎԱՆԱՋՈՐԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

*Նվիրվում է  
ՀԱՊՀ Վանաձորի մասնաճյուղի  
հիմնադրման 60-ամյակին  
1959-2019*

ՏԱՐԵԿԱՆ ՈՒՍՆԱՐՈՂԱԿԱՆ  
ԳԻՏԱԺՈՂՈՎ  
10-11 ՀՈՒՆԻՍ  
ԾՐԱԳԻՐ

Վանաձոր 2019

ԱՌՈՒՏԻՈՒ ԼԻԱԳՈՒՄԱՐՆԻՍՏ  
*Նախագահի՝ տ.գ.թ., դոցենտ Ա.Գ. Խառատյան  
(հունիսի 10-ին՝ ժամը 12:00, խարան 3203)  
Ողջույնի խոսք*

Ազադյան Անժելա (ակ. խումբ՝ ՎՁՏ 501Բ)  
*Մաքառումների և հաղթանակների 60-ամյա ուղին  
ղեկավար՝ տնտ.գ.թ., դոցենտ Լ.Աղաբաբյան*

Հակոբջանյան Սարգիս (ակ. խումբ՝ ՎՄԵ 505Բ) \*  
*Գրավիր նոր բարձունքներ Արդենկ և Արխիդաչ ընկերություն-  
ների հետ*  
*ղեկավար՝ Արխիդաչ ընկերության մարքեթինգի և  
հաղորդակցությունների պատասխանատու՝ Կ.Աբրահամյան*

Հովհաննիսյան Անժելա (ակ.խումբ՝ ՎՁՏ 801Մ)  
Առաքելյան Աստղիկ (ակ.խումբ՝ ՎՁՏ 501Բ)  
*Ազրոտեխնոլոգիայի ստեղծումն իբրև գյուղատնտեսության ոլոր-  
տում տնտեսական հեղափոխության խթան*  
*ղեկավարներ՝ տ. գ. թ., դոցենտ, Մ.Նաջարյան,  
Ն. Մամուլյան*

Սմիրնյանյան Աշխեն (ակ. խումբ՝ ՎԻՀ 508Բ)  
*I o T (Internet of Things) համակարգեր*  
*ղեկավար՝ Հայ-թեք Գեթվել  
ընկերության Վանաձորի մասնաճյուղի տնօրեն  
Ս. Ջաղացպանյան*

**Թիմի անդամ Ա. Առաքելյանի ժեներալ ՀԱՊՀ ՎՄ  
ՈՒԳ գիտաժողովի լիազումար նիստում (2019թ.)**



# ՈՒՍՈՒՄՆԱԴՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԱՍՏԴԻԿ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԱԾ ԳԻՏԱԿԱՆ ՀՈՂՎԱԾՆԵՐԸ

## Ուսումնառության ժամանակահատվածում հրատարակված գիտական հոդվածներ



ԼՈՌԻԻ ՄԱՐԶՈՒՄ ԱԳՐՈՏԵԽՆՈՂԱԴԻ  
ՍՏԵՂԾՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ  
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

### СОЗДАНИЕ АГРОТЕХНИЧЕСКОГО ПАРКА ЛОРИЙСКОЙ ОБЛАСТИ КАК СТИМУЛ РАЗВИТИЯ ОТРАСЛИ



### ФЕДЕРАЛЬНОЕ ГОСУДАРСТВЕННОЕ АВТОНОМНОЕ ОБРАЗОВАТЕЛЬНОЕ УЧРЕЖДЕНИЕ ВЫСШЕГО ОБРАЗОВАНИЯ «НАУКА – ОБЩЕСТВО – ТЕХНОЛОГИИ»

### ВСЕРОССИЙСКАЯ НАУЧНО-ПРАКТИЧЕСКАЯ КОНФЕРЕНЦИЯ «НАУКА – ОБЩЕСТВО – ТЕХНОЛОГИИ – 2021» (SST-2021)

### ПРОГРАММА КОНФЕРЕНЦИИ

ПЛЕНАРНОЕ ЗАСЕДАНИЕ  
26 марта 2021, с 10:00  
РАБОТА СЕКЦИЙ  
26 марта 2021, с 10:00  
SST-2021@BK.RU // ☎ +7 (885) 143-28-03 // ☎ (495) 682-20-53

ПЕРСПЕКТИВЫ ВНЕДРЕНИЯ ЦИФРОВОГО  
СЕЛЬСКОГО ХОЗЯЙСТВА В АРМЕНИИ

1. **Ա. Ա. Առաքելյան** «Լոռու մարզում Ագրոտեխնոպարկի ստեղծման անհրաժեշտությունը և տնտեսական հիմնավորումը» ՀԱՊՀ(Պոլիտեխնիկ) Լրաբեր, Գիտական հոդվածների ժողովածու, Երևան 2019թ.

2. **А. А. Аракелян и др.** «Создание Агротехнического парка Лорийской области как стимул развития отрасли». Журнал об экономических науках «Бенефициар» [www.beneficiar-idp.ru](http://www.beneficiar-idp.ru) г. Кемерово 2020г.

3. **А. А. Аракелян и др.** «Перспективы внедрения цифрового сельского хозяйства в Армении» Новые технологии высшей школы Наука, техника, педагогика Материалы Всероссийской научно-практической конференции «Наука – Общество – Технологии – 2021» (Россия, Москва, 26 марта 2021 года):

**Ա. Ա. Առաքելյանի** կողմից ներկայացվող առաջարկ՝ **ArmAgro** բջջային հավելվածի ներդրումը որպես ՀՀ գյուղատնտեսության ոլորտում նոր տեխնոլոգիայի կիրառում



Հավելվածի մուտքի էջեր

«ՀինՎան ՍՊԸ» ինֆորմացիոն էջ



Կատարված աշխատանքները և արդյունքները թույլ են տալիս արձանագրել, որ ուսանողների հետ անհատական աշխատանքների կազմակերպումը թիմային եղանակով ունի էական առավելություններ: Մասնավորապես՝

*Նշված ժամանակահատվածում ուսանողների թիմային աշխատանքի արդյունքները ցույց են տալիս, որ դրա արդյունավետությունը բավականին բարձր է՝ որակյալ և ըստ նշանակության մասնագետի պատրաստման, համագործակցության ընդլայնման, ուսանողների տեսական, գիտական և հատկապես գործնական գիտելիքների կուտակման հնարավորությունների, տարբեր կուրսերի ուսանողների համախմբման, փոխօգնության, թիմի ներսում և դրանից դուրս գիտելիքների փոխանակման, անձնական հրաշալի փոխհարաբերությունների առումով: Այս ամենը անշուշտ նպաստում են վաղվա անհատի ձևավորմանը:*

*Ներկայացված աշխատանքները համագործակցության յուրահատուկ օրինակ է՝ միտված բացահայտելու ու հնարավոր լավագույն տարբերակով լուծելու ձեռնարկության խնդիրները:*

*Համագործակցությունը տնտեսվարողների հետ կկրի շարունակական բնույթ, որպեսզի Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Վանաձորի մասնաճյուղի ճարտարագիտական միտքը ներդրվի արտադրության զարգացման համար, որի անմիջական մասնակիցը դառնում է ուսանողը:*

*ՀԱՊՀ Վանաձորի մասնաճյուղի  
ՈԻՄ բաժնի վարիչ տ.գ.թ., դոցենտ  
Միքայել Նաջարյան*